ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 սեպտեմբերի 2021 թվականի N 355-Ա

Ն. ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 493-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Կոտայքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար ***Նունե Եղիազարյանին*** տրամադրել 2021 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 20 աշխատանքային օր, 2021 թվականի սեպտեմբերի 30-ից մինչև հոկտեմբերի 27-ը ներառյալ:

2. ***Նունե Եղիազարյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Կոտայքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության հաշվապահ ***Վահագն Ղարիբյանի*** վրա:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Կոտայքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ ***Վահագն Ղարիբյանին*** և «Ակունքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար ***Շուշանիկ Մուրադյանին*** ապահովել «Կոտայքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության սպասարկման տարածքի բնակչության առաջնային բժշկական օգնության և սպասարկման իրականացումը՝ «Ակունքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության համապատասխան մասնագետի *(ընտանեկան բժիշկ՝ Շուշանիկ Մուրադյան)* կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2021 թվականի սեպտեմբերի 29
ք. Հրազդան